ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 1953-Ա

<<ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/12>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ Ա/Ձ << ԱՄԱԼՅԱ ԳԱԼՈՅԱՆԻՆ>> ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության տակ գտնվող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (մանկապարտեզների) 2024թ. կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդի ձևով 01.12.2023թ. -ին հայտարարվել է <<ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/12>> ծածկագրով գնման ընթացակարգ, նշված գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 9-ը մասնակիցներ, այդ թվում Ա/Ձ <<Ամալյա Գալոյանը>> , <<ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/12>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել մինչև 12.12.2023թ, ժամը 16:00-ն, իսկ հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 13.12-14.12.2023թ. ընթացքում: <<ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/12>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ գնման ընթացակարգի N(1,3,5,8,11,12,13,18,20,24,37,39,40,43,44,49,55,56,57) չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ա/Ձ <<Ամալյա Գալոյանի>> կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր աղյուսակներում առկա էին անհամապատասխանություններ: ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպան>> կարգի(Այսուհետ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել՝ առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը պատշաճ ծանուցված լինելով առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ, սահմանված ժամկետում շտկումները կատարել է, բացի 1-ին չափաբաժնից: Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում շտկում է արձանագրված անհամապատասխանությունները, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում նրա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Հիմք

ընդունելուվ 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով Ա/Ձ Ամալյա Գալոյանի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել այն: Արդյունքում Ա/Ձ Ամալյա Գալոյանը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է 1-ին չափաբաժնի մասով գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի , 6-րդ կետի ա/ ենթակետի՝ Ա/Ձ Ամալյա Գալոյանը պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով՝ որոշում եմ.

1. <<ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/12>> ծածկագրով գնման գործընթացի մասնակից Ա/Ձ Ամալյա Գալոյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				
Անվանում	ՀՎՀՀ	Գործունեության հասցե	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքերը	Գնամն ընթացակարգի ծածկագիրը
Ա/Ձ Ամալյա Գալոյան	74380975	Գեղարքունիքի մարզ, Ն. Գետաշեն, Կենտրոն թաղ. 5-րդ փող. տ10	<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի , 6-րդ կետի ա/ ենթակետ **Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը**	<<ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/12>>

2. Սույն որոշման մեկ օրինակ ուղարկել Ա/Ձ Ամալյա Գալոյանին և ՀՀ Ֆինանսների նախարարություն

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26
ք. Մարտունի